Հավելված 6
ՍԱԳԿ-ԳՀԱՊՁԲ-21/1* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍԱԳԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-1

ք. Երևան «13» հուլիսի 2021թ.

«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ-ը ի դեմս Տ. արկոսյան-ի, որը գործում է «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտականկենտրոն» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Դելտա>>ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա.Կարաբաշյան ի, որը գործում է <<Դելտա>>ՍՊԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 6666000 վեց միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[20]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

---

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքել իս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[20] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվել իք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվել իք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից

ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք.Երևան, Մասիսի խճղ., 107/2	<<Դելտա>>ՍՊԸ
ՀՎՀՀ՝ 03506324	ք. Երևան, Կոմիտասի պող. 49/4
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ	<<Կոնվերս բանկ >>ՓԲԸ
(հշ.N) 2474600075000000	Հ/Հ 193004670058
էլ. փ՝ scsbv@yahoo.com	ՀՎՀՀ 00004912
	Տնօրեն՝ Ա.Կարապետյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը հակասող դրույթներ:

Հավելված N 1
«30» հունիսի 2021թ. կնքված
ՍԱԳԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՊՀ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքանիշն նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարում		
									Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ
1	38431700/1	Միկրոպիպետները կրող շրջանակաձև ստենդ	Boeco carousel stand to hold 6 pipettes, carousel stand for SA-series, Boeco GmbH Germany	Պտտվող, նախատեսված 6 պիպետների ուղղահայաց տեղադրելու համար	հատ	78000	390000	5	«Մենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ ք.Երևան, Մասիսի խձղ., 107/2	5	Ապրանքի/ների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է՝ սույն Պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 20 օրացույցային օրվա ընթացքում:
5	33191110/1	Ուղղահայաց ավտոկլավ	Autolave vertical, UTKBC-75Lv, MRC Lab	Տարողությունը 75 լ, Համակարգչային կառավարմամբ LED էկրանով համակարգի առկայություն, Ճնշման անվտանգության փական, ջերմաստիճանային կարգավորման ինտերվալ 50-126 0C, ժամանակի կարգավորման ինտերվալ 0-99 րոպե, Հզորությունը ոչ ավել 3500 Վտ, ներառում է 2 բիքս Քաշը - 90կգ; Չափսերը - 600x600x1400մմ	հատ	3000000	3000000	1	«Մենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ ք.Երևան, Մասիսի խձղ., 107/2	1	Ապրանքի/ների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է՝ սույն Պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 20 օրացույցային օրվա ընթացքում:
6	38431700/3	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 0.5-10 մկլ, 1 channel	Boeco SA series adjustable volume pipette 1 ch, 0.5-10µl, Boeco GmbH Germany	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 0.5-10 մկլ, Ավտոկլավացվող՝ ոչ պակաս 121 °C ջերմաստիճանում, Ծայրակալները հեռացնող համակարգի երկարության կարգավորման հնարավորություն: Հարվածների և ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ դիմացկունություն: Բաժանումը՝ 0.1մկլ: Ճշտությունը (inaccuracy). նվազագույն ծավալի դեպքում՝ ± 2.50%; միջին ծավալի դեպքում՝ ± 2.0%, առավելագույն ծավալի դեպքում՝ ± 1.0%: Ճշգրտությունը (impresizion) նվազագույն ծավալի դեպքում՝ ± 1.50%; միջին ծավալի դեպքում՝ ± 1.0%; առավելագույն ծավալի դեպքում՝ ± 0.8%: CE marc	հատ	108000	432000	4	«Մենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ ք.Երևան, Մասիսի խձղ., 107/2	4	Ապրանքի/ների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է՝ սույն Պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 20 օրացույցային օրվա ընթացքում:
7	38431700/4	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 10-100 մկլ, 1 channel	Boeco SA series adjustable volume pipette 1 ch, 10-100µl, Boeco GmbH Germany	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 10-100 մկլ, Ավտոկլավացվող՝ ոչ պակաս 121 °C ջերմաստիճանում, Ծայրակալները հեռացնող համակարգի երկարության կարգավորման հնարավորություն: Հարվածների և ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ դիմացկունություն: Բաժանումը՝ 0.5 մկլ: Ճշտությունը (inaccuracy). նվազագույն ծավալի դեպքում՝ ± 0.8%; միջին ծավալի դեպքում՝ ± 1.0%, առավելագույն ծավալի դեպքում՝ ± 0.80%: Ճշգրտությունը (impresizion) նվազագույն ծավալի դեպքում՝ ± 1.50%; միջին ծավալի դեպքում՝ ± 0.50%; առավելագույն ծավալի դեպքում՝ ±0.15%: CE marc	հատ	108000	432000	4	«Մենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ ք.Երևան, Մասիսի խձղ., 107/2	4	Ապրանքի/ների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է՝ սույն Պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 20 օրացույցային օրվա ընթացքում:
8	38431700/5	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 100-1000 մկլ, 1 channel	Boeco SA series adjustable volume pipette 1 ch, 100-1000µl, Boeco GmbH Germany	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 100-1000 մկլ, Ավտոկլավացվող՝ ոչ պակաս 121 °C ջերմաստիճանում, Ծայրակալները հեռացնող համակարգի երկարության կարգավորման հնարավորություն: Հարվածների և ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ դիմացկունություն: Բաժանումը՝ 5 մկլ: Ճշտությունը (inaccuracy). նվազագույն ծավալի դեպքում՝ ± 0.8%; միջին ծավալի դեպքում՝ ± 1.0%, առավելագույն ծավալի դեպքում՝ ± 0.60%: Ճշգրտությունը (impresizion) նվազագույն ծավալի դեպքում՝ ± 0.70%; միջին ծավալի դեպքում՝ ± 0.40%; առավելագույն ծավալի դեպքում՝ ± 0.20%: CE marc	հատ	108000	432000	4	«Մենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ ք.Երևան, Մասիսի խձղ., 107/2	4	Ապրանքի/ների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է՝ սույն Պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 20 օրացույցային օրվա ընթացքում:

9	38431700/9	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 1000-10000 մկլ, 1 channel	Boeco SA series adjustable volume pipette 1 ch, 1000-10000µl, Boeco GmbH Germany	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի1000-10000 մկլ, Ավտոկլավացվող՝ ոչ պակաս 121 °C ջերմաստիճանում, Ծայրակալները հեռացնող համակարգի երկարության կարգավորման հնարավորություն: Հարվածների և ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ դիմացկունություն: Բաժանումը 50մկլ: Ճշտությունը (inaccuracy). նվազագույն ծավալի դեպքում՝ ± 2.0%; միջին ծավալի դեպքում՝ ± 0,60%, առավելագույն ծավալի դեպքում՝ ± 0.50%: Ճշգրտությունը (impresizion)՝ նվազագույն ծավալի դեպքում՝ ± 0.60%; միջին ծավալի դեպքում՝ ± 0.30%; առավելագույն ծավալի դեպքում՝ ± 0.15%: CE marc	հատ	156000	624000	4	«Սենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ ք.Երևան, Մասիսի խճղ., 107/2	4	Ապրանքի/ների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է՝ սույն Պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 20 օրացույցային օրվա ընթացքում:
10	38431700/7	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 5-50 մկլ, 8- channel	Boeco SA series adjustable volume pipette 8 ch, 5-50µl, Boeco GmbH Germany	Ավտոկլավացվող՝ ոչ պակաս 121 °C ջերմաստիճանում Ծայրակալները հեռացնող համակարգի երկարության կարգավորման հնարավորություն: Հարվածների և ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ դիմացկունություն: Բաժանումը 1 մկլ: Ճշտությունը (inaccuracy). նվազագույն ծավալի դեպքում՝ ± 3.0%; միջին ծավալի դեպքում՝ ± 1. 0%, առավելագույն ծավալի դեպքում՝ ± 0.60%: Ճշգրտությունը (impresizion)՝ նվազագույն ծավալի դեպքում՝ ± 1.00%; միջին ծավալի դեպքում՝ ± 0.50%; առավելագույն ծավալի դեպքում՝ ± 0.30%: CE marc	հատ	348000	348000	1	«Սենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ ք.Երևան, Մասիսի խճղ., 107/2	1	Ապրանքի/ների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է՝ սույն Պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 20 օրացույցային օրվա ընթացքում:
11	38431700/8	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 10-100 մկլ, 8- channel	Boeco SA series adjustable volume pipette 8 ch, 10-100µl, Boeco GmbH Germany	Ավտոկլավացվող՝ ոչ պակաս 121 °C ջերմաստիճանում Ծայրակալները հեռացնող համակարգի երկարության կարգավորման հնարավորություն: Հարվածների և ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ դիմացկունություն: Բաժանումը 1 մկլ: Ճշտությունը (inaccuracy). նվազագույն ծավալի դեպքում՝ ± 3.0%; միջին ծավալի դեպքում՝ ± 1. 0%, առավելագույն ծավալի դեպքում՝ ± 0.60%: Ճշգրտությունը (impresizion)՝ նվազագույն ծավալի դեպքում՝ ± 1.00%; միջին ծավալի դեպքում՝ ± 0.50%; առավելագույն ծավալի դեպքում՝ ± 0.30%: CE marc	հատ	348000	348000	1	«Սենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ ք.Երևան, Մասիսի խճղ., 107/2	1	Ապրանքի/ների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է՝ սույն Պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 20 օրացույցային օրվա ընթացքում:
12	38431700/6	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 30-300 մկլ, 8- channel	Boeco SA series adjustable volume pipette 8 ch, 30-300µl, Boeco GmbH Germany	Ավտոկլավացվող՝ ոչ պակաս 121 °C ջերմաստիճանում Ծայրակալները հեռացնող համակարգի երկարության կարգավորման հնարավորություն: Հարվածների և ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ դիմացկունություն: Բաժանումը 1 մկլ: Ճշտությունը (inaccuracy). նվազագույն ծավալի դեպքում՝ ± 3.0%; միջին ծավալի դեպքում՝ ± 1. 0%, առավելագույն ծավալի դեպքում՝ ± 0.60%: Ճշգրտությունը (impresizion)՝ նվազագույն ծավալի դեպքում՝ ± 1.00%; միջին ծավալի դեպքում՝ ± 0.50%; առավելագույն ծավալի դեպքում՝ ± 0.30%: CE marc	հատ	348000	348000	1	«Սենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ ք.Երևան, Մասիսի խճղ., 107/2	1	Ապրանքի/ների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է՝ սույն Պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 20 օրացույցային օրվա ընթացքում:
17	42931100/4	Ցենտրիֆուգ - Վորտեքս 2	Boeco vortex mixer, V2H, Boeco GmbH Germany	Արագության և ժամանակի ռեժիմների կարգավորում Էկրան - արագության ցուցիչ, ժամանակի կարգավորիչ Պտտման արագությունը - 300 - 4200 rpm Տատանում- օրբիտալ, 4 մմ Ճշգրտությունը - ± 10 rpm Առավելագույն ծանրաբեռնվածությունը - 500 գ Արագացման ժամանակը -3 վ Պուլսացիոն ռեժիմ - 5 վ վիբրացիա հետո 5 վ դադար Պուլսացիոն ռեժիմի կարգավորում - 1-ից 99 վ Էլեկտրոսնուցումը - արտաքին աղբյուր Քաշը - 2.8 կգ; Չափսերը - 205 x 136 x 138,5 մմ	հատ	312000	312000	1	«Սենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ ք.Երևան, Մասիսի խճղ., 107/2	1	Ապրանքի/ների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է՝ սույն Պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 20 օրացույցային օրվա ընթացքում:
Ընդամենը							6666000	X	X	X	X

ԳՆՈՐԴ
ք.Երևան, Մասիսի խճղ., 107/2
հվհհ 03506324
«ՍՈՍԱՐԲՍՊ» ՓԲԸ
հշ.հ 22000577.000, 15000900
էլ. փ. sosarb@yahoo.com

ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՒ
Դեյտա-ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտասի պող. 49/4
Կոմերց բանկ >>ՓԲԸ
272 19 004670058
20422 00004912
Տիգրան Ա Կարապետյան

ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 2
«30» հունիսի 2021թ. կնքված
ՍԱԳԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV)	անվանումը	չ/Մ	քանակը	միավոր գինը / ՀՀ դրամ	ընդհանուր գինը / ՀՀ դրամ	2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
							հունիս		հուլիս		օգոստոս		սեպտեմբեր		հոկտեմբեր		նոյեմբեր		դեկտեմբեր	Հաջորդող
1	38431700/1	Միկրոպիպետները կրող շրջանակաձև ստենդ	հատ	5	78000	390000	մինչև	62400,0	մինչև	124800,0	մինչև	187200,0	մինչև	249600,0	մինչև	312000,0	մինչև	351000,0	390000,0	390000,0
5	33191110/1	Ուղղահայաց ավտոկլավ	հատ	1	3000000	3000000	մինչև	480000,0	մինչև	960000,0	մինչև	1440000,0	մինչև	1920000,0	մինչև	2400000,0	մինչև	2700000,0	3000000,0	3000000,0
6	38431700/3	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 0.5-10 մկլ, 1 channel	հատ	4	108000	432000	մինչև	69120,0	մինչև	138240,0	մինչև	207360,0	մինչև	276480,0	մինչև	345600,0	մինչև	388800,0	432000,0	432000,0
7	38431700/4	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 10-100 մկլ, 1 channel	հատ	4	108000	432000	մինչև	69120,0	մինչև	138240,0	մինչև	207360,0	մինչև	276480,0	մինչև	345600,0	մինչև	388800,0	432000,0	432000,0
8	38431700/5	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 100-1000 մկլ, 1 channel	հատ	4	108000	432000	մինչև	69120,0	մինչև	138240,0	մինչև	207360,0	մինչև	276480,0	մինչև	345600,0	մինչև	388800,0	432000,0	432000,0
9	38431700/9	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 1000-10000 մկլ, 1 channel	հատ	4	156000	624000	մինչև	99840,0	մինչև	199680,0	մինչև	299520,0	մինչև	399360,0	մինչև	499200,0	մինչև	561600,0	624000,0	624000,0
10	38431700/7	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 5-50 մկլ, 8- channel	հատ	1	348000	348000	մինչև	55680,0	մինչև	111360,0	մինչև	167040,0	մինչև	222720,0	մինչև	278400,0	մինչև	313200,0	348000,0	348000,0
11	38431700/8	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 10-100 մկլ, 8- channel	հատ	1	348000	348000	մինչև	55680,0	մինչև	111360,0	մինչև	167040,0	մինչև	222720,0	մինչև	278400,0	մինչև	313200,0	348000,0	348000,0
12	38431700/6	Ավտոմատ բաժնավորիչ փոփոխական ծավալի 30-300 մկլ, 8- channel	հատ	1	348000	348000	մինչև	55680,0	մինչև	111360,0	մինչև	167040,0	մինչև	222720,0	մինչև	278400,0	մինչև	313200,0	348000,0	348000,0
17	42931100/4	Ցենտրիֆուգ – Վորտեքս 2	հատ	1	312000	312000	մինչև	49920,0	մինչև	99840,0	մինչև	149760,0	մինչև	199680,0	մինչև	249600,0	մինչև	280800,0	312000,0	312000,0

ՎԱՃԱՌՈՂ

<<Դելտա>>ՍՊԸ
ք. Երևան, Գոմիտասի պող. 49/4
<<Կոնվերս բանկ >>ՓԲԸ
հ/հ 193004670058
ՀՎՀՀ 00004912
Տնօրեն Ա.Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԳՆՈՐԴ
ք.Երևան, Մասիսի խաղ., 107/2
ՀՎՀՀ 03506324
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
(հշ.N) 2474600075000000
էլ. փ. scsbv@yahoo.com

/ստորագրություն/
Կ.Տ